ՀՏԴ 929: 891.981Տերյան

Doi:10.54503/0135-0536-2024.1-271

# ՀՈՒՇԵՐ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ*

*Մեծանուն բանաստեղծ Վահան Տերյանի անունը մեր ընտանիքում մշտապես հնչել է առանձնակի հպարտությամբ: Հայրս՝ վաստակավոր լրագրող Աղասի Մելքոնյանը, տասնամյակներ շարունակ՝ 1949–1995 թթ., լինելով Վրաստանի հայալեզու գլխավոր պարբերականի՝ «Խորհրդային Վրաստան» (այնուհետև՝ «Վրաստան») թերթի Ախալքալաքի, Բոգդանովկայի (Նինոծմինդա) և Ասպինձայի վարչական շրջանների սեփական թղթակիցը, ամեն տարի իր հոդվածներում մեծ ոգևորությամբ լուսաբանում էր Տերյանի ծննդավայր Գանձա գյուղում տոնվող պոեզիայի տերյանական օրերը: Գանձա մեկնելու ճանապարհին կամ մեր տուն պոետի դստեր՝ Նվարդ Տերյանի հերթական այցելության ժամանակ մեզ հիշեցնում էր, որ մեծն Վահան Տերյանի հետ ազգակցական կապ ունենք. բանաստեղծի մայրը՝ Յուղաբերը, Ջավախքի Ջամդուրա գյուղից էր: Պապիս՝ Հարությունն (Արութիկ) Մելքոնյանի մայրը՝ Եղիսաբեթը (Եղսաբ), Յուղաբերի քույրն էր: Այսինքն՝ Վահանն ու Հարությունը մորաքրոջ զավակներ էին:*

*Գանձայից Ախալքալաք տեղափոխվելուց հետո Վահան Տերյանը հաստատվել էր մերձակա Ջամդուրա գյուղում՝ մորաքրոջ տանը, և Հարությունի հետ 1892 թ. նույն դասարանում սովորել քաղաքի Մեսրոպյան վարժարանում[1]: Տերյանագետ Սաքո Սուքիասյանի մի գրառումից[2] տեղեկացել էի, որ պապս պոետի կյանքի ու գործունեության ջավախքյան օրերի մասին թողել է ուշագրավ հուշագրություն: Մեզ հաջողվեց Ախալքալաքի շրջանային թերթում գտնել այդ հուշերը[3], որը կրճատումներով հրատարակվեց «Գրական թերթ»-ում[4]: Սույն հուշագրությունը, որը խմբագրական մասնակի միջամտությամբ, ծանոթագրություններով տպագրվում է ամբողջությամբ, լույս է սփռում Վ. Տերյանի կյանքի ու գործունեության չուսումնասիրված էջերի՝ հատկապես Մեսրոպյան դպրոցում սովորելու, Ջավախք կատարած այցելությունների վրա և կարող է օգտակար լինել տերյանասեր հանրության համար:*

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

---

** Ներկայացվել է 16. I. 2024 թ., ընդունվել է տպագրության 22. III. 2024 թ.:*

*[1] Ախալքալաքի Մեսրոպյան վարժարանի մասին մանրամասն տե՛ս Ա. Մելքոնյան. Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից, Երևան, 2005, էջ 61–62, 68–79:*

*[2] Տե՛ս Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1964, էջ 12–13:*

*[3] Տե՛ս «Հոկտեմբերի դրոշով» (Ախալքալաք), 21. II. 1960:*

*[4] Տե՛ս Վահան Տերյանի վերջին այցը Ջավախք.– «Գրական թերթ», 21. VI. 2022:*

## ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ
### (Ախալքալաքի բնակիչ Հարություն Մելքոնյանի հուշերը)

*Ամեն անգամ, երբ Ախալքալաքում որևէ առիթ է ներկայանում խոսելու մորաքրոջս տղայի՝ Վահան Տերյանի մասին, իմ հիշողության մեջ վերակենդանանում են այնքան սիրելի մեր մանկության տարիները, նայիվ ու խղճուկ մեր գեղջկական կյանքը: Ու մի պահ ինձ թվում է, թե մանկացել եմ, երեխա եմ անհոգ ու խելառ:*

*Ընդամենը 10–11 տարեկան պատանիներ էինք ես ու Վահանը, սովորում էինք Ախալքալաքի քաղաքային դպրոցում, որն այժմյան վրացական դպրոցի շենքում էր:*

*Ամեն օր, վաղ առավոտյան, երբ արևը նոր էր սկսում բարձրանալ Աբուլի[5] ետևից, մենք՝ թռվռան պատանիներս, Ախալքալաքից 2 կիլոմետր հեռու ընկած Զամդուրա գյուղից շտապում էինք քաղաք դասերին հասնելու համար: Վահանն այդ տարի Գանձայից տեղափոխվել էր Ախալքալաքի դպրոցը և մնում էր մեր տանը: Մենք միասին էինք պառկում մի անկողնում և մեր դասերը պատրաստում գյուղական ճրագի աղոտ լույսի տակ: Մեղքս ինչ թաքցնեմ, այնքան էլ սեր չունեի սովորելու , իսկ նա կարդում էր: Պատահում էր, որ աշակերտական ժողով էինք ունենում և ուշ էինք դուրս գալիս դպրոցից: Այդպիսի դեպքերում գնում, գիշերում էինք մեր քեռու՝ Ստեփան Տեր-Ղազարյանի տանը, որն ապրում էր քաղաքում:*

*Այսօր էլ հիշում եմ մեր ուսուցիչներ Ջալալ Տեր-Գրիգորյանին և Շավարշ Դեմիրճօղլյանին: Առաջինը ղարաբաղցի էր, Ջրաբերդ գյուղից: Ավելի քան քառասուն տարի ապրելով և գործելով Ախալքալաքում՝ նա բավականին մտերմացել էր ջավախքեցիների հետ[6]: Երկրորդը՝ ընկ. Շավարշ Դեմիրճօղլյանը, որ բնիկ ախալքալաքցի է (այժմ բնակվում է Թբիլիսիում), մինչև օրս էլ Ախալքալաք գալուց ջերմորեն է հիշում այդ օրերը: Որքա՜ն էինք սիրում ու հարգում մեր ուսուցիչներին:*

*Մեր դպրոցը լավ ավանդույթներ ուներ. հաճախ տեղի էին ունենում գրական երեկոներ, դիսպուտներ: Վահանը, իհարկե, մասնակցում էր դրանց, երբեմն էլ ելույթներ ունենում: Նա դեռ այն ժամանակվանից աչքի էր ընկնում իր կրքոտ, տաքարյուն բնավորությամբ: Շատ էր սիրում այս կամ այն հարցի մասին վիճել, առարկել: Երբեմն էլ լրջորեն կամ կատակով ասում էր.*

*– Մնալու տեղ չէ, Հարությո՛ւն:*

*Պատահում էր, շաբաթ օրերը Վահանի հետ գնում էինք Գանձա, գիշերում նրանց տանը և հաջորդ օրը՝ կիրակի, վերադառնում քաղաք:*

*Լավ եմ հիշում, վարդևոր էր: Վահանի հայրը՝ Տեր-Սուքիասը, մեզ ամբողջ ընտանիքով հրավիրել էր Գանձա: Մենք էլ մեծ պատրաստությամբ երկու*

---

[5] *Աբուլը Ջավախքի ամենաբարձր գագաթն է. ծովի մակերևույթից բարձր է 3301 մ:*

[6] *Ջավախքում Ջալալ Տեր-Գրիգորյանի գործունեության մասին տե՛ս Ա. Մելքոնյան. Ջավախքի արցախցի զավակը՝ Ջալալ Տեր-Գրիգորյան.– ՊԲՀ, 2021, № 3, էջ 60–71 և Կրթամշակութային կյանքն Արցախում, գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2022, էջ 176–192:*

*կառքով ճամփա ընկանք: Ճանապարհը ձգվում էր ալպիական հարուստ բուսականությամբ ծածկված Ջավախքի բարձրավանդակով, անցնում լեռնային ղորապտույտները և միանում Սաղամոյի գոգավորությանը[7]: Երեկոյան դեմ արդեն Գանձայում էինք: Տեր-Սուքիասն իրեն հատուկ հյուրասիրությամբ գրկաբաց ընդունեց մեզ և առաջնորդեց տուն:*

*Հաջորդ առավոտյան, արևածագին մեր աղմկալից թափորը բռնեց Փարվանայի ճանապարհը: Տեղ հասնելուն պես, ընտրեցինք լճին մոտ մի տափարակ, որն ամբողջությամբ ծածկված էր ծաղիկներով և հենց այդտեղ էլ, բնության այդ գողտրիկ վայրում, ժամեր շարունակ վայելեցինք մեր երջանիկ անդորրը: Այդ օրը Տեր-Սուքիասը հայտնեց, որ Վահանին տեղափոխելու է Թբիլիսի, Արամի[8] մոտ: Մի անասելի տխրություն համակեց ինձ, պղտորվեց հոգուս անդորրը:*

*Այդ դեպքից հետո անցան օրեր. մոռացվեց շատ բան, ժամանակն էլ սահում էր իր սովորական ընթացքով: Բայց այն օրը, մեր բաժանման այն անմոռաց պահը մինչև օրս էլ մնում է իմ հիշողության մեջ և խոր կսկիծով կրծում իմ հոգին:*

*Դասերը նոր էինք վերջացրել, հիշում եմ, պատրաստվում էինք գյուղ գնալու: Մեկ էլ Վահանը գրքերը հանձնեց ինձ թե՝*

*– Իմ բանը պրծավ Հարություն ջան:*

*Իմ հարցին՝*

*– Այ տղա՛, ի՞նչ պատահեց քեզ:*

*Նա կտրուկ պատասխանեց.*

*– Ես գնացի…*

*Բայց ո՞ւր պետք է գնար և ինչպե՞ս, ես այդ չգիտեի, մանավանդ որ մոտը ոչ մի կոպեկ փող չուներ, ինչու և ինձ թվում էր, թե կատակում է: Այդ օրը հակառակի նման նա գյուղ էլ չեկավ, մնաց մեր քեռու տանը: Առավոտյան, երբ վերադարձա դպրոց, նա արդեն չկար: Քեռուցս փող էր վերցրել և մեկնել Թբիլիսի եղբոր՝ Արամի մոտ: Ախալքալաքում նա սովորեց ընդամենը 2–3 ամիս:*

*Այլևս ինձ համար պարզ դարձավ, որ կորցրել եմ իմ անփոխարինելի մանկական ընկերոջը: Ինչ կարող էի անել, որոշ ժամանակից հետո ես նույնպես թողեցի այդ դպրոցը, բայց արդեն այլ պատճառներով:*

* * *

*Անցան տարիներ ու տարիների հետ էլ մեր պատանեկությունը:*

*1916 թվականի աշնանը լսեցինք, որ Տերյանի առողջությունը վատացել է և բժիշկների խորհրդով եկել է Անդրկովկաս՝ բուժվելու: Այդ օրերին մենք անհամբեր սպասում էինք նրան: Գիտեինք, որ գալու է Ախալքալաք: Ես էլ աշխատում էի գինու պահեստում:*

---

[7] *Սաղամոն Ջավախքի լճերից է:*

[8] *Արամը (Տեր-Գրիգորյան, 1879–1924) Վահան Տերյանի եղբայրն է, ավարտել է Թիֆլիսի գիմնազիան, Սանկտ Պետերբուրգի և Դորպատի համալսարանները: Ժամանակի ճանաչված հայ իրավաբաններից էր, հայտնի է նաև որպես հրապարակախոս ու թարգմանիչ:*

*Մի օր քեռուս տղան՝ Համազը, որ սեփական խանութ ուներ քաղաքում, եկավ պահեստ, թե՝*

*– Հարությո՛ւն, գնանք ինձ մոտ՝ խանութ, քեզ սպասող կա:*

*Ես էլ պահեստը փակելով, հետևեցի նրան: Երբ մտանք խանութ, քեռուս տղան ցույց տալով անկյունում նստած մարդուն, դիմեց ինձ.*

*– Չե՞ս ճանաչում, լա՛վ նայիր դեմքին:*

*Առաջին պահին ինձ համար հեռու անծանոթի հայացքում այժմ արդեն նկատում էի ինչ-որ ծանոթ ու մոտ բան: Նրա աչքերը, նրա հայացքը հիշեցնում էին իմ մորաքրոջը՝ Յուղաբին (այդպես էլ մենք նրան անվանում էինք): Այլևս կասկածել չէի կարող.*

*–Վա՛նո ջան, դո՞ւ ես, – հազիվ կարողացա արտասանել:*

*Այնուհետև հիշում եմ մեր գրկախառնությունը և ուրախության արցունքները: Մի՞թե կարելի էր չհուզվել, երբ մոտ քսան տարի շարունակ մենք չէինք տեսել իրար:*

*Առաջին իսկ օրը նա մեզ հայտնեց, որ խիստ հոգնել է մեծ քաղաքի աղմուկից և կարոտել է մեր սարերին ու հանդերին: Նրա դեմքը, արտաքինը հիվանդոտ էին, ինքն էլ բավականին մռայլ էր ու լռիկ:*

*Հետագայում համոզվեցինք, որ այդ անհանգիստ և կրքոտ մարդը, չնայած հիվանդությանը, ի վիճակի չէր անտարբեր մնալ գավառական քաղաքի անց ու դարձերի նկատմամբ: Երբեմն էլ դժգոհում էր, թե գավառում ճանձրանում է, ուզում է մեկնել Պետերբուրգ, սակայն բժիշկները խորհուրդ չէին տալիս:*

*Մի օր էլ, երբ ես պատրաստվում էի Կախեթ մեկնել՝ պահեստի համար գինի բերելու, հանկարծ ներս մտավ Վահանը: Նա հուզված էր և խոսում էր վրդովված ձայնով, պատմեց, որ ինքը հանձն է առել գավառական դատարանում հողային հարցով հանդես գալ Փոկա[9] գյուղի գյուղացիների շահերի պաշտպանությամբ: Ես մինչև վերջ էլ կարգին չհասկացա, թե բանն ինչումն էր (դե ինքն էլ շատ հուզված էր և արագ-արագ էր խոսում), միայն այն եմ հիշում, որ ասում էր.*

*– Փոկացիների բողոքն իրավացի է, նրանք կհաղթեն:*

*Հաճախ էր պատահում, որ Վահանը ինձ մոտ պահեստում կամ մեր Համազենց տանը սկսում էր գանգատվել գյուղացիների տնտեսական ծանր վիճակի մասին, մերկացնում ցարական իշխանավորներին:*

*Բանաստեղծն այդ տարի Ջավախքում մնաց մինչև փետրվար ամիսը: Դրանից հետո՝ 1917 թվականին, մի ամառային շոգ օր պահեստը փակել և գնացել էի մեր «Խաս բախչայում» հանգստանալու: Մեկ էլ քեռուս տղան՝ Համազը, երևաց ու հայտնեց, որ Տերյանը Ախալքալաքում է և հետաքրքրվում է զեմստվային ընտրությունների հարցով: Երեկոյան, երբ հավաքվել էինք տանը, սկսեց վրդովված խոսել, որ ընտրությունների ժամանակ խարդախություններ են կատարվել և, որ ինքը պիտի մերկացնի կեղծիքը:*

*Մի օր էլ եկավ, թե՝*

*– Հարությո՛ւն, պատրաստվի՛ր, այսօր երեկոյան գնում ենք Ջամդուրա:*

---

*[9] Փոկան Ջավախքի հնագույն գյուղերից է, հիշատակվում է Պետինգերյան քարտեզում: Գտնվում է Փարվանա լճի հարավային ափին (տե՛ս Ա. Մ ե լ ք ո ն - յ ա ն. Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 41):*

*Ես էլ պահեստը սովորականից շուտ փակելով, գնացի տուն: Պայմանավորվել էինք այնտեղից շարժվել: Այդ օրը այդպես էլ չկարողացանք գնալ գյուղ, նա տուն եկավ բավական ուշ և հայտնեց, որ դպրոցում հանդիպում էին կազմակերպել, և ինքն էլ մասնակցել է:*

*Հաջորդ առավոտյան ոտքով ճանապարհ ընկանք: Ամբողջ ճանապարհին նա խոսում էր միայն գյուղից և գյուղացիներից: Տեղ հասնելուն պես, դիմեցինք մեր տուն, դռան չեմին գրկախառնվեց մորս հետ: Մի քիչ հանգստանալուց հետո լավաշ և թարմ մածուն կերանք:*

*Հաջորդ առավոտյան վաղ արթնացավ և մեն-մենակ սկսեց շրջել գյուղում: Մեկ էլ վերադարձավ տուն, թե՝*

*– Գնում ենք, Հարությո՛ւն:*

*Այդպես էր նա միշտ էլ: Եվ զարմանալի բան չկար: Եկավ, նստեց, մի երկու խոսք և մեկ էլ՝ մնաք բարով: Ի՛նչ կարող էի անել, կեսօրին վերադարձանք քաղաք:*

*Տերյանը քաղաք գալիս երբեմն էլ գիշերում էր հյուրանոցում, կարծեք խուսափում էր բարեկամներին «նեղություն» տալուց: Եվ երբ որևէ առիթ էր լինում կշտամբելու, թե ինչու է այդպես վարվում, միշտ անմեղ ժպիտը դեմքին, պատասխանում էր.*

*– Գործերս խառն են, չեմ ուզում նեղություն տալ:*

*Մենք արդեն գիտեինք, որ նրա հոգսը ամենևին էլ այդ չէր: Մարդը պարզապես ցանկանում էր մենակ մնալ, ինքնամփոփ և ազատ՝ իր հոգսերով և մտքերով տարվելու համար:*

*Մի օր էլ լսեցինք, որ մեկնել է Ջավախքից, առանց վերջին անգամ մեզ հետ տեսնվելու: Դրանից հետո այլևս չտեսա նրան:*

*Օրեր անց քաղաքում սկսեցին պտտվել լուրեր, որ բանաստեղծ Վահան Տերյանը Ախալքալաքի ռազմաքաղաքի ակումբում տեղի ունեցած միտինգում հանդես է եկել հեղափոխական փայլուն ճառով և մեծ իրարանցում առաջացրել զինվորների մեջ: Իսկ փոքր խանչալեցի[10] Մամաս Մղդեսյանը, որը փոստային սայլակներ էր պահում Շիրակ-Ախալքալաք-Ախալցխա գծի վրա, հաջորդ գիշերը եռաձի կառքով բանաստեղծին տեղափոխում է Ախալցխա:*

*Կասկածից վեր է, որ Տերյանի շտապ մեկնումը հիմնականում պայմանավորված էր այդ վերջին դեպքով, հնարավոր բարդություններից խուսափելու համար:*

*Բանաստեղծը ընդմիշտ հրաժեշտ տվեց իր համար այնքան սիրելի Ջավախքին:*

[10] *Փոքր Խանչալին Ջավախքի հարավում գտնվող գյուղերից է:*